Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
հոկտեմբերի 12-ի N 1744 - Ն որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2003 թվականի
մարտի 20-ի N 274-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԲԱՐԵԳՈՐԾՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐԱԾ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում բարեգործի գործունեությունը խրախուսելու նպատակով «Հայաստանի Հանրապետության տարվա բարեգործ» և «Հայաստանի Հանրապետության պատվավոր բարեգործ» կոչումների շնորհման համար բարեգործների տրամադրած բարեգործական աջակցության հաշվառման կարգը:

2. Բարեգործական որակված ծրագրերի շրջանակներում բարեգործների տրամադրած բարեգործական աջակցության հաշվառումը կատարում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված՝ բարեգործության ոլորտը համակարգող մարմինը (այսուհետ՝ լիազորված մարմին):

3. Բարեգործների տրամադրած բարեգործական աջակցության (դրամական կամ բնաիրային) չափը հաշվարկվում է տվյալ օրացուցային տարվա հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար:

4. Տարբեր բարեգործական ծրագրերի շրջանակներում միևնույն անհատ բարեգործի տրամադրած բարեգործական աջակցության չափը հաշվարկվում է տվյալ օրացուցային տարվա ընթացքում տրամադրած բարեգործական աջակցության հանրագումարի ձևով:

5. Պետական մարմինները, բարեգործական և այլ ոչ առևտրային կազմակերպությունները մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա հունվարի 31-ը լիազորված մարմին են ներկայացնում անհատ բարեգործների տրամադրած բարեգործական աջակցության մասին տեղեկատվություն, որը պետք է ներառի անհատ բարեգործի անունը, հայրանունը, ազգանունը, բնակության վայրը, դրամական աջակցության չափը կամ բնաիրային աջակցության դրամական արժեքն ու բարեգործական ծրագրի անվանումը: Պետական մարմինների, բարեգործական և այլ ոչ առևտրային կազմակերպությունների տրամադրած տեղեկատվությունը ստորագրվում է տվյալ մարմնի ղեկավարի կողմից ու կնքվում տվյալ մարմնի կնիքով:

6. Լիազորված մարմինը ստացված տեղեկատվությունը գրանցում է այդ նպատակով վարվող գրանցամատյաններում: Գրանցամատյանի ձևը սահմանվում է լիազորված մարմնի կողմից ընդունված իրավական ակտով:

7. Լիազորված մարմինը տվյալ տարվան հաջորդող տարվա փետրվարին ամփոփում է պետական մարմիններից, բարեգործական և այլ ոչ առևտրային կազմակերպություններից ստացված՝ սույն կարգի 5-րդ կետում նշված տեղեկատվությունը, անհրաժեշտության դեպքում պարզում դրանց հավաստիությունը:

8. Լիազորված մարմինը «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող թեկնածուների տվյալները ներկայացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետին՝ Հայաստանի Հանրապետության նախագահին միջնորդություն ներկայացնելու համար:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

13.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ